

**1.2.5. Կապ**

Հայաստանի Հանրապետությունում 2002թ. հունվար-հոկտեմբերին, ըստ կապի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 37621.4<sup>1</sup> մլն. դրամ, որը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 2.8%-ով: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 18696.1 մլն. դրամ, որը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 15.9%-ով:

---

<sup>1</sup> Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի: